



ԾԱՂԻԿ

ԿՃՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԾԱՂՐՈՂՆԵՐՈՒ ՕՌԿԱՆ ԵՒ ԱԶԳ. ԵՐԳԻԾԱՐԱՆԱԿԱՆ ՍԱՏԻՐԱԿԱՆ ԾԱՂՐԱԹԵՐԹ

Որ ամէն բան կը մեղակոծէ, չտաճը կը պատմէ, չեղածը կը նկարագրէ,
միտք կ'երեւակայէ, կը ձողիկէ եւ... Եւրոպականի:
Այս ամէնը կը հաւաստէ, կը դատարարէ, կը խմբագրէ
ԳԵՐԵՂՈՐ ԹՈՐՈՍՅԱՆ (Բ. ԼՈՒԹԻՒՆԵԱՆ)

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրգուշու խան թիւ 7

ՈՒՐԱԹ 19 ԴԵԿՏ. 1908

«ԿԱՎՈՇ» — «ԾԱՂԻԿ» ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒՅԻՒՆ

— ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿՈՐ —

Ամէն մարդ դիտել կուտայ մեզ քէ՛ Կաւոշ եւ Ծաղիկ միասին զանազան կը նային:

— Սեն Կաւոշն ալ Ծաղիկն ալ չեն կրնար գտնուիլ, կ'ըսեն, բայց զի նոյնի դիմ ալ մտածուցի, որպէս զի երկուսն ալ մէկն են թուական գրուիմ եւ բարձրագոյն աստիճանի վրայ փափուկ խնդիրը նկատուի թանձր առնելու համար բացառիկ նիւս մը գումարեց եւ որոշեց ճիշդ եւս վերջնական սակագինը:

★ Կաւոշ եւ Ծաղիկ միասին, արեւիկան, Կոյսայ համար 80, վեցամսեայ՝ 45 դրու: Կաւոշ կամ Ծաղիկ՝ տասնմիկ՝ արեւիկան 45 դրու:

Կաւոշ եւ Ծաղիկ միասին, արեւիկան, Գաւառի համար 100, վեցամսեայ՝ 60 դրու: Կաւոշ կամ Ծաղիկ՝ տասնմիկ՝ արեւիկան 60, վեցամսեայ՝ 35 դրու:

Կաւոշ եւ Ծաղիկ միասին, Արտասահմանի համար արեւիկան 25 ժր., վեցամսեայ՝ 13 ժր.: Կաւոշ կամ Ծաղիկ՝ տասնմիկ՝ արեւիկան 15, վեցամսեայ՝ 8 ժրան:

★ Զրի քեթ կուտանք կոր եւ զանազան քիմիական մանրամասն:
Բայց ամէն մարդ գիտէ արդէն քէ մենք փարայի համար չենք աշխատիր, —
մ'ն, քա՛ն լիցի, — այլ ձա՛յ ազգին համար:

Թիւ 63

Տնօրէն Ռ. Սաղաւաճ

10 ՓԵՐՍ

ԻՆՉՊԵՍ ԶԵՈՒՔ ԲԵՐԻՆՔ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

(ՀԵՏԵՐՈՂԱԿԱՆ ԵՒ ՍԱՏՐԱԿԱՆ ԵՒ ՍԱՂԻԿ)

Թուրքիոյ մէջ այժմ մարդ չկայ որ չգիտնայ թէ ի՞նչպէս ձեռք բերել Սաղաւաճը:

Ոմանք կ'ըսեն թէ՛ մենք բերինք, ոմանք կ'ըսեն թէ՛ զօրի փոսթայով եկաւ ոմանք այդ փառքը Բուսնիէի երկաթ թուղիին տունէն եւ ոմանք ալ Մեսաթըրիի ու Մախսուսէի չողմանաւնէ:

Բայց կ'երեւի թէ ո՛չ մէկը չիտէ չիտակ տեղեկութիւն ունի անցած դարձածէն՝ քանի որ «ինչ կանցնի կը դառնան» միայն իրականութիւնը գիտէ:

Ազատութիւնը եկաւ, այդ չէ խնդիրը, այլ թէ ի՞նչպէս եկաւ, այդ ի՞նչ է խնդիրը:

Այսպէս կարգ մը միամիտներ ալ կարծեցին թէ՛ Ազատութիւնը Լեւոն Լարնայի ու Երուսաղէմ Զաւարեանի բերին մինչդեռ այդ խեղճները հազիւ ինքզինքնին կրցան Պոլիս նետել ու ապրուիլ:

Ուրիշներ, միշտ միամիտ, կարծեցին թէ՛ Միհմաթ Զարափ Լոնտոնէն բերաւ եւ կամ Արշակ Զաւարեանի Բարիլէն, ոմանք Արմէնեան-Արշակէն խուսիքն վրայ ձգեցին այդ բանը եւ ոմանք ալ խորհեցան թէ մի գոյցէ Արքայաճառ Այվազեան իր տոպրակէն հանած ըլլայ: Տեսայ մարդիկ որոնք Ս. Խաչին վրայ եւ Պոլիսի վրայ հաւաքեցին անտունով երդում կ'ընէին թէ իրենք աչքովին տեսած են որ Վահէ Արքունեան այդ Ազատութիւնը ձեռք բերած, ապանակով կամ սպանակով տալով Արիկ Ունճեան, Յովհաննէս Թաւադեան եւ Արիկար Արիկարեանը:

Եւ այսպէս ամէն ոք մէկ մէկ կարծիք ունէր:

Յոյները իրենց կարգին կը կարծէին թէ Ազատութիւնը ձեռք բերուեցաւ Բոսոստի խմբագրատան Մաքսուտիսի եւ կամ Զինկեանի Գոթթիի ձեռքով:

Թուրքերը՝ Նիսիի եւ Ենիքի պէյեր, որոնք վրայ կը ձգէին, մաս մը կար որ Թահսին եւ Իզիզի փաշաները կը կարծէին, Բէօր Ալին կը կարծէր որ ինք բերած է եւ Թուրք Ազգ. թատ-

րոնին հիմը եղող Պիւրհանէտովին պէյի ստուակէն Ազատութեան դուրս ելլելը տեսողներ կան եղեր:

Արդէն այս աշխարհը շատ ապերախ է. երբէք չեն խորհիր թէ կրնայ ըլլալ որ Ազատութիւնը բերած ըլլան խմբագիրները եւ ան ալ Հայ խմբագիրները:

Ի՞նչու չէ:

Այդքան դժուար բան է Ազատութիւնը ձեռք բերելը:

Չեմ կարծեր, որովհետեւ փորձով տեսանք որ ատկէ դիւրին բան չի կայ... ըլլալէն վերջ:

Հայ խմբագիրը մարդու տեղ դնող չի կայ իբր թէ՛ ան ծնած ըլլայ մի միայն Ազգեր Ելլանիսի ընկու համար:

Ո՛չ բարեկամներս, Հայ խմբագիրները, մանաւանդ այս օրերու, աւելի մեծ նշանակութիւն ունին քան մի՛ մեծ քիթ, քանի որ այլեւս, ինչպէս չեղանցինք ասկէ առաջ, խեղճ անիմեցինք մեծ քիթին:

Ո՛վ իրաւունք տուաւ ձեզի որ կարծէք թէ Ազատութիւնը բերին Նիսիի ու Ենիքի պէյերը եւ ի՞նչու վայրկեան մը չը խորհիր թէ՛ անգամ մըն ալ ըսա խմբագիրներուն հարցընենք, կրնայ ըլլալ որ իրենք բերած ըլլան:

Ի՞նչու չը կարծէք թէ Եր. Թուրքեանը հերոս մըն է իր կարգին, Բ. Լոնտոնեանը ֆէդայի մը, Յ. Տէր Յակոբեան խմբագրի մը, Ի՞նչու համար Երուսղի պոպայի գէպըին հեղինակները՝ Եր. Տ. Անդրէասեան, Արթուր Սանտայան, Արիկ Մուսայանեան եւ Միսաք Գոյունեան չըլլան: Ի՞նչու Պաշտան մոնիդ եւ պոպայ նետողները՝ Յակոբ Վարժապետեան, Պարոյր Բէշեան, Սիմոն Չեօբէճեան, Տիգրան Արփիար ու Զարեհ Նէմցէն չըլլան:

Խմբագիրները արեւն չունին:

Մամուլը ուժ մըն է կրնէ ու կը դառնայ ներդասէս եւ դուք Մամուլի ուժ ըսելով կը հասկնաք քան ձիու ուժ ունեցող մեքենայ մը միայն:

Յուլիս 11էն ի վեր բերանս խփած էի եւ ձայն չէի հաներ, հար-

կաւ, կ'ըսէի, որ մը գո՛նէ մեր Հայեւրդ կ'անդադրուան եւ իրենց սխալը կը շտկեն:

Բայց մինչեւ այսօր կեցցէ՛ Սահմանադրութիւն եւ կեցցէ՛ Գոմիէն պոպայէ դատ բան մը ըրած չունինք:

Եւ անոնք ալ կարծելով որ իրաւ իրաւ իրենք բերած են ազատութիւնը, սկսան ուռնալ, ուռնալ, այնքան որ օր մըն ալ հաւատացին վերջապէս թէ՛ հարկաւ իրենք բերած են ազատութիւնը որ այսքան պատիւներ կ'ըլլան իրենց:

Համբերութիւնն ալ սակայն չափ մը ունի, ալ սրտեղս եկաւ եւ եթէ քիչ մըն ալ մնայ պիտի պայթի:

Թուրքիոյ աճող ազատութիւնը երեք խմբագիրներ բերած ըլլան, զիւրեքման տընութիւններէ եւ այնքան տանջանքներէ յետոյ եւ ատոր պատուով վայելէն անոնք որ ուրիշ բան չեն ըրած, բայց եթէ տասը օր Շէֆիք փաշային հիւր եղած են, քսան օր Աքիա կեցած են, Ալըքեան Խորէն Պատրիարքին պատկերը պատուած են, օր մը Երուսղ կեցած են, ժամ մը Նէճիպ Մէհմեթի կողմէ հարցաքննուած են, ու՛րթ օր Մէհմեդ Երեմիէն պատկած են, յաջողած են փախչիլ Վառնա եւ թերթ հանած են Եգիպտոս, բանալիստութիւններ կատարած են Նիւ-Եօրքի եւ Պոսթընի մէջ:

Ետեւա՛ չի կայ:

Մտիկ ըրէք պարոններ՝ Թուրքիոյ ազատութիւնը ձեռք բերուեցաւ «Արեւելք» լրագրի երեք խմբագիրներուն կողմէ:

Աչքերիդ չորս, չորս մի՛ բանաք այլ մտիկ ըրէ՛ք:

Յուլիս 8ին երեքը լրագրի օր արդէն ձեռք բերած էինք ազատութիւնը՝ Ես, Արթուր Սանտայանը եւ Զարեհ Նէմցէն:

Հիմայ պիտի խնդաք եւ պիտի կարծէք որ կատակ կ'ընեմ:

Ասանկ ազատական եւ սուրբ դատարու առթիւ կատակ չեմ ընէր բարեկամներս, քանի որ ես ալ Թուրքիոյ ազատութիւնը բերող Ամնատուրը Երուսղեան (Արթուր Սանտայան, Զարեհ Նէմցէն եւ ես) մաս կը կազմեմ:

Ի՞նչպէս ձեռք բերինք:

Յուլիս 8ի երեքը լրագրի օրն էր, «Արեւելք» ժամը 8 ին հրապարակ ելած էր:

Իրիկունը բարեկամներս, դիտել տուին թէ սխալ մը սպրդած էր... Վուրի մը մէջ որ, կը վերջանար այսպէս «Ամնատուր անատան պահէ գահուն վրայ...»:

Ի՞նչ կ'ըսէք որ ըլլայ այդ «վերջանալ»:

Պ. Պ. Գրաշարները «վրայ»ին «ք»ն չէին դրեր եւ եղած էր «Գահուն վայ»:

Թերթը գոցելու ձեռնարկներ կ'ըլլար:

Բայց մենք երեք ֆէտայիներս, մենք երեք քաջերս, մենք որ մէկ մէկ Աղբիւր Սերոբներ, Անդրանիկներ ու Սերոբ փաշաներ էինք, դիմադրեցինք (պարապ խօսք) ու քաջարար կռուիլէ յետոյ ու կուրծք տալով տպագրական տեսուչին ուժակոծուաներուն... ձեռք բերինք ազատութիւնը:

Ահա՛ թէ ի՞նչպէս երեք խմբագիրներս ձեռք բերած էինք ազատութիւնը Ենիք 8ին, բայց պէտք է գիտնալ որ մինչեւ յուլիս 11 մենք երեքս, թերթին տնօրէնն ալ մէկտեղ... տեղեկներս ըրած էինք:

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՇՔ

Ի. ՂԱՆԱԹԻԱՆ

(ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶԵՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՅ)

Հրաշքին դարը անցած է կ'ըսեն: Հաւատացէ՛ք որ սխալ է. չա՛տ սխալ եւ բոլորովին սխալ. հրաշքին դարը ո՛չ թէ անցած է, այլ նոր կը սկսի:

Թէն հիմայ Գրիստոս մը չունինք որ հրաշք գործէ, բայց անոր տեղ քանի մը Մեսիաններ ունինք, որոնք կը քաղովեն եւ հրաշք կը գործեն... Ղալաթիոյ մէջ:

Անցեալ չարթու խորին վշտով եւ մեծ ցաւով ծանուցած էինք դուռնադէտ եւ կոկիւղ մահը Տիար Կնդրոնական Վարժարանի, որ յետ կարճատեւ հիւանդութեան իր ոտքերը տնկած էր, հակառակ իր հիւանդագահ-խնամակալներու ջանքերուն եւ թաղումն ալ կատարուած էր մեծ հանդիսաւորութեամբ:

Բայց ականաւոր Տոքթորներէ կազմուած ատոմարաններու ժողով մը, լրագրացած՝ Տօքթ. Մեղքոն Կիւրճեանէ, Տօքթ. Մաղիկէ, եւ Տօքթ.

ՍՊԱՍԵՑԷՔ ԿԱՐԴԱԼ

ԿԱՐԴԱԼ

ԲԱՑԱՌԻԿ ԹԻԻԸ

«ԿԱՎՈՐՉ՝ ԾԱՂԻԿ»

ՔՐՔՁԱԼԻՐ, ՔՐՔՁԱԼԻՐ...

Յակոբ Տ. Յակոբեանէ, փափաքեցաւ զիսգննութիւն մը կատարել հանգուցեալի մարմին վրայ:

Պ. Պ. հիւանդապահ-խնամակալներուն ներկայութեան խելճ Տիար Կեղորոնականի մարմինը դուրս հանաւեցաւ գերեզմանէն: Արդէն ներսը լու վրայ էր. ա՛յն ատեն առաջ անցաւ Տօքթ Կիւրճեան և գոչեց. —

«Կեղորոնականէ արի՛ եկ արտաքս»: Այս դարասկզբիկ «Տալիթա կու» միջին իր արդիւնքը տուաւ անմիջապէս և Տիար Կեղորոնական վարժարանը նոյն միջոցին թօթուեց ինքզինքը, պատանքը խղեց ու... յալուածիւն առաւ. դէպի վեր բարձրանալ սկսելով. իր պատանքը որ դեռ տին ինկած էր, անմիջապէս առաւ իր «թօղփեօյլ» և մեկնեցաւ դէպի Հինտիստան:

Այս հրաշափառ Ս. Յարութեան առջև անմէնքս ալ ապահար և հիացած խնդրեցինք Տիար Կեղորոնականէն որ բարեհաճի վար իջնել:

Այս յարութեան առթիւ մեր խորին ուրախութիւնները կը յայտնենք Վարժապետեան, Մոստիչեան և Ձեռագ ընտանիքներուն եւ պարագաներուն:

ՏԻԱՐ ԿԵՂՈՐՈՆԱԿԱՆՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԵՆՈՒՄԱՆԱՅԻՄԱՆ ԱՌԹԻՒ:

★

Լուր մը որ կապ ունի վերին հին հետք. —

«Ձրոյց կը շրջի թէ Հինդիւսնը հրաժարեցուցեր են Կեղորոնական վարժարանի անօրէնութիւնէն:

★

Վարագոյրը իջաւ:

ԸՆԿԵՐ ԿԻՆՈ

ԱՊՏԱԿՆԵՐ

ՁԱՐԿ, ԲԱՑՅ ՄՏԻԿ ԸՐԷ՛

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ

ԳՈՒՐԾՈՒՆԸ ԻՍԷՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

ԱՍՏԻՃԱՆ

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

ՊԱՇՏՈՆ

Պաշտօնական Բարձր. Զեկուցում

Երէկ, հինգշաբթի, Ղալաթիոյ եկեղեցիին արարողութիւններէն ետքը, Գուրճեան Սանի Կայսրու թեան՝ Մեծափառ Նախագահին՝ Ընկեր Կիլիօ կողմէ շնորհուած արտօնութեամբ, Փիւնիկեցոց դեսպան՝ Ասպետ Փօն Գօլանճեան և Ա. Թարգման Պառն Բասալիէ տը Մօնթէքէն, Զօնկուլտաքի Հայկական դեսպան՝ Զօր. Թէոքիկ, Կարկեղոնացիներու դեսպան՝ Սըր Հրանտ Ասատուր, Մարօքի կայսրը՝ Բիւզանդ Բէչեան, Ղալաթիոյ նախկին դեսպան՝ Յէրիգ

Հինդիւսն փաշա և Սկիւտարի դատական ջննիչ Նշան Ճիլանովիչ, պատիւ ունեցան ոմանք պաշտօնապէս և ոմանք ալ ո՛չ-պաշտօնապէս ներկայանալու Նորին Նախագահական Մեծափառութեան: Այս առթիւ սեւ Ֆուքու, փայլուն կօշիկներով, աչքերը դէպի վար և օձիքները դէպի վեր Մեծափառ Նախագահին ներկայացաւ Բաբելաստանի Նաբուգոդոնոսոր Արքային նորընտիր դեսպանը՝ կոմս Աշոտ Բէչեան և Նորին Նախագահ. Մեծափառութեան ներկայացուց «Սեդրաֆ, Միսաֆ եւ Արեդ-նազով» ազամանդակու պատուանշանը:

Յետոյ իշխան Սիւմանթօ որ Պոլսոյ Հայկական դեսպանատան գործերը առժամաբար վարելու պաշտօն ունի, պատիւ ունեցաւ ոչ-պաշտօնապէս ներկայանալու Մեծափառին: Այս առթիւ ներկայացաւ նաեւ Սուլալթար կղզիներուն նորընտիր դեսպան Մարքիզ Վարդգէս:

Դեսպանական ընդունելութիւն

Սուլալթար կղզիներու նոր դեսպանը Մարքիզ Վարդգէս. ինչպէս կ'երեւի պաշտօնական զեկուցումէն, երէկ իր հետեւորդներով Գուրճեան խանի կայսրութեան պալատը գնաց իր յանձնարարագիրները մատուցանելու: Մեր կայսրութեան արտաքին գործոց նախարարութեան արարողապետի օգնականը երէկ, պաշտօնական համազգեստով և մեր պալատան Ա. կարգի կառքերով՝ Սուլալթարի դեսպանատունը գնաց: Քիչ վերջը թափօրը կաշուեցաւ: Առաջին կառքին մէջ բազմած էին (հասարակ մարդոց համար «նստած էին» կը գրուի) դեսպան Վան Տէր Կարին մարքիզ Վարդգէս՝ պաշտօնական համազգեստով և արարողապետի օգնականը երկրորդին մէջ՝ առաջին թարգման ընկեր Վահագն և ընդհանուր հիւպատոս Արմէն-Գարօ և երրորդին մէջ՝ դեսպանատան բօլիկ տօքթ. Հայրէնեան և գործակատար Միհր-դատ Հայկազն: Թափօրը երբ Գուրճեանը սլալատին առջեւ հասաւ, զինուորական պատիւներ ընծայուեցան և չիֆթեկ նաղարաի պալատական նուագախումբը նուագեց «Ճանրմ Ատանալը. գուրճեմ Ատանալը» ազգային Բանագողիէ քայլերը: Դեսպան մարքիզ Վարդգէս և հետեւորդները ընդունուեցան արարողապետ Սըր Միկրիչ Թօգաթիւսի կողմէ: Յետոյ Մեծափառ Նախագահին կողմէ շնորհուած արտօնութեամբ, դեսպանը հանդիսական արարողութեամբ պատիւ ունեցաւ Նորին Մեծափառութեան ներկայանալու: Մարքիզ Վան Տէր Կարին Վարդգէս իր յանձնարարագիրը մատուցանելով, յայտարարեց թէ պիտի աշխատի աւելի ևս ամրապնդելու Սուլալթարի և Գուրճեանի խանի միջեւ եղած յարաբերութիւնները: Մեծափառ Նախագահը՝ Կիլիօ բարեհաճեցաւ իր Մեծափառական մեծարանքները չընդունել դեսպանին... որ անմիջապէս ճեպը դրաւ: Ունկնդրութեան միջոցին արտաքին գործերու նախարար

կոմս Յակոբ Տէր-Յակոբեան թարգմանի պաշտօն կը վարէր: Դեսպանը յետոյ միեւնոյն թափօրով Սագըզ-Աղաճի դեսպանատունը վերադարձաւ... աղօթելով:

ԱՍՏԻՃԱՆ

Կարմիր Սալօրի աստիճան տըրուեցաւ Ճէրիտէի խմբագիր Յակոբ փաշա Վարժապետեանի, որ այս առթիւ բարձրացաւ նաեւ մեր պալատան թագուհիի յարկաբաժնին Աղայապետի պաշտօնին:

Երթաւ Բարոյի Ա. աստիճան շնորհուեցաւ Ղալաթիոյ մեծ համալսարանին վարիչ-տնօրէն Հինդիւսն բէկի, որ այս առթիւ ստացաւ նաեւ «Վեց Գիր» պատուանշանին Գ. կարգը:

Մահափառի աստիճան և մեծ համազգեստը իշխան Սիլվիօ Րիչչիլի. Թուսա Եուլֆանովիչ և Շարլ Եուլֆանովիչի:

Այսին Ա. աստիճան տըրուեցաւ Գուրճեանու Նահանգին արտաքին յարաբերութեանց տեսուչ Բիւրքէի գատէ Լեւոն փաշայի:

Բալանի աստիճան Գերմանիոյ երեւելիներէն Պ. Անդրէասեանի և Պ. Պաուլեանի, որոնք Վիլհէլմ կայսեր շինել տուած աղբիւրին և մեր նախագահին մասին գովեստով խօսած էին, տեղական սրճարանի մը մէջ:

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Գիշացի պատուանշանին Ա. կարգը Վահէ Արդուեանի և Գ. կարգը Լեւոն Լարենցի ի վարձ բարուք կերպով անդիլի ալսարճ մարդ զրկելուն:

Ականջ պատուանշանին մեծ խաչը Պ. Երուանդ Զաւուչեանի որ վերջերս Կայսրութեան թնդանօթածիգ զօրաց հրամանատար անուանուեցաւ, նկատելով որ Բուլէլի Հիսարի բերդերը պաշտպանելու գործին մէջ այնքան մեծ ռազմագիտութիւն յայտնուած էր:

Ճիյեթ քալասի պատուանշանին ականակու մեծ Ճիյեթ և ժապաւէնը Ճանկիւլեան փաշայի, որ Վանայ նահանգը մէկ վայրկեանի մէջ պաշարած և երկու վայրկեանի մէջ գրաւած էր:

Պաշտօնի Տերոյնց պատուանշանին Բ. կարգը Տ. Յարութիւն Արքեպս. Մրմիւսի, որ հրաժարած ըլլալով Երուսաղէմի Պատրիարքութեան, Գուրճեանի Սինօղին կողմէ Աղթամարայ Կաթողիկոս ընտրուած էր:

Կծծի պատուանշանին բարձրագոյն կարգը՝ հանդերձ իր ստորագրութիւններով, Թաթարու Տ. Բ. որ Կայսրութեան «Կծծի»ներու քիւլիւն նախագահ ընտրուեցաւ այս առթիւ:

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Ճերմակ Լեւոն իշխանը՝ Շուր և Կատու պատուանշանին Բ. կարգը տուաւ Տիգրան Զաւէնի, իրեւառաջնակարգ գօնֆէռան ընտղ:

Վենետիկի իշխանը՝ Օթէլլո պատուանշանին Ա. կարգը շնորհած է Պ. Աբէլեանի, Տէգուսմօնալի Ա. կարգը՝ Տիկին Առմէնեանի և Եակոյի Ա. կարգը՝ Պ. Առմէնեանի:

ՊԱՇՏՈՆ

Մագրիգիւղ գաւառին Ենի մահալլէ գաւառակին կառավարիչ անուանուեցաւ Դերկոմա Հրանդ Թորոսեան, որ հրաժարած էր Առեւտրական Գիւլայի անդամակցութենէն:

Շիլիի Հայկական դեսպան Նշանակուեցաւ Փօն տէր Հայկ Թայքէ-սէնչիլայ, պահելով նաեւ Գերման Կայսրութեան դեսպանատան խորհրդականի պաշտօնը:

«Գարուն» պաշտօնաթերթին Տընօրէն-Խմբագրապետ անուանուեցաւ Արմէնգատէ Ենովք փաշա որ հաւանակ 200 ոսկի ամսական առաջարկուելուն չէր ստանձնած Նիւ-Եօքէէրլոյի խմբագրապետութիւնը:

Գեղարուեստից նախարարութեան խորհրդական անուանուեցաւ Ռոտով Թոր Սամիկ, ստանալով այս առթիւ «Շահման» պատուանշանին Ա. կարգը:

«Աթուր» Աղադիւրի անդամ Նշանակուեցաւ Կոմ Գրիգոր Մագուտ-Յակոբեան, որ այս առթիւ մեր պալատին «Աթուր»ներուն վերատեսուչ անուանուեցաւ:

★

Խորհրդարանի նախագահին 250 ոսկի ամսական յատկացուցեր են: Վա՛յ պապամ վա՛յ: Մէկ մըն ալ կ'ելլեն կը պօռան և կը կանչեն թէ Թուրքիոյ անտուկը պարապ է. ընաւ կանաքա՛ր. պարապ չըլլար տէ ի՛նչ խաչը կ'ուտէ: Բարիքէն ատո՛ր համար հոս եկաւ Ահմէտ Րիզա: 250 ոսկի ամսականով պիտի իրկէ Թուրքիան: Մենք 150 ոսկիով կը փըրկենք:

★

Երուսաղէմի Ղուռնդ Լուս. Շիլ-մանեանը, որ այժմ շնորհիւ Չիլին կրեան վրդ. ի անդիլի ալսարճին մէջ կը բնակի, ընդարձակ բողոքադիր մը զրկած է Օսմ. Խորհրդարանին, թուելով իր դէպի յաւիտենականութիւն աքսորուելուն պատճառները:

★

Կ'ըսուի թէ՛ Մեստիսին միշտ կեցած է ա՛յն տեղը, ուր կը սիրէ կենալ. թնդանօթները լեցուն են և դէպի վեր ուղղուած ո՛րոք կը սպառնայ արդեօք. անցեալ օր շո՛րհալի օրիորդ մը Բըթի-Շանի թատրոնը, կը հարցնէր թէ որո՛ւ կը սպասէ տէր և շա՛տ լաւ գիտէր. բայց չգիտէր կը կեղծէր: Ազնիւ օրիորդ, այդ Պ. Մեստիսին հոն կը սպասէ որպէս զի երբ քիթը մեկնալիս ըլլայ անմիջապէս դարման մը խորհուի:

★

Ազգային հրապարակ ելաւ. մեր Դաշնակցական ընկերներն են հանդուներ՝ կ'արժէ որ ամէն մարդ իր տան մէջ ունենայ նախ Ծաղիկ մը և յետոյ... Ազգայի մը: Առաջինը կը խնդացնէ, երկրորդը կը յեղափոխէ:

★

Միսն Զէյթուն ու Սառուն չէ որ ունին իրենց աղքատներն ու սովեալները: Ակնայ մէջ ալ, ո՛վ Հայեր, ահագին թիւով սովեալներ ու

Ինչպէս առաջին ամիսն ալ յայ-
տարած էինք, այն բաժանորդները
որոնք բաժնեգրեցին չեն դրկած կան-
խիկ, իրաւունք չունին մասնակցելու
մեր վիճակահանութեան :

ԾԱՂԻԿ-ԿԱՎՈՇՈՒ	
ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ	
ԿՏՐՕՆ ԹԻՒ 14 ԴԵԿ. 19	
ՅՈՒՆՎ. 15ր (Ը. Ե.) վիճակա-	
հանութեան համար մասնակցե-	
լու իրաւունք :	
Անա՛ քսան (20) էժիպտէնի թիւերը	
25195	212371
54777	212372
75862	212373
78987	212377
78988	212379
106602	271039
106605	286463
106607	334229
127106	334230
152940	334231

աղքատներ կան : Երբ ամէն տեղէ
ամէն օր հաց կը պոռան, Ակնայ աղ-
քատները հակառակ չորաբեկ հաց
մը իսկ չունենալուն, բերանին իսկ
չեն բանար, որովհետեւ «մօւրալ ա-
մաչեն» : Ասոր համար է որ Ակնեցի
Աղքայիները կիրակի օր նպաստի
ներկայացում մը պիտի սարքեն Բըթի
Շանի մէջ . գացէ՛ք, ո՛վ Հայ բարե-
սիրտ թատերասէրներ, գացէ՛ք այդ
ներկայացումին . մասնաւոր գացէ՛ք
անոր համար որ հո՛ն ձեր դրամին
փոխարէն հրաշալի, ամենահրաշալի
և ամենաքանկելի խաղ մը՝ Արեւ-
եան-Արմէնեան խումբին «Եփփիէն»
պիտի տեսնէք : Ուրի՛շ Եւգեններու
և Էօփէններու չը նմանիր, Շիրվան
դատէի այս Եւգենէն գացէ՛ք տեսէ՛ք
և եթէ գո՛չ չը մնաք, եկէ՛ք ես ետ
պիտի տամ ձեր դրամը : Տոմարները
կը ծախուին Բերա՛ կալաթա Սէ-
րայի անկիւնի ծխալաճառին քով և
Պահճէգարու ծխալաճառ Պողոսա-
նի քով :

Սուլթանը ըսեր է եղեր թէ՛ «ես
Սահմանադրութեան թշնամիներուն
թշնամին եմ» : Անանկ է նէ հին րէ-
ծիմքն մէջ Սահմանադրութեան թըշ-
նամիներուն, թշնամիները որոնք
էին : Դադանիք... միշտ գաղտնիք :

Մարդուանցիները բարկացեր են
եղեր որ դաշնակցական ընկեր Բար-
սեղ Շահպաղի որ քարոզչական
պաշտօնով գաւառները հովութեան
ղրկուեցաւ և Մարդուան ալ հան-
դիպելով իրեւ դաշնակցական ընկեր
բանախօսութիւններ ըրած է : Մար-
դուանցիք բարկացեր են ըսելով թէ՛
հոն Հնչակեաններուն ըստն է, իրաւ
ամենամեծ բոյնը որ Պոլսը պէտք է
ըլլայ, հոս երեք հոգիէ՛ք զատ մարդ
չկայ և սխալ է ո՛վ Մարդուանցիք
կարծիլ թէ՛ Երրորդութիւն մը յեղա-
փոխական գործերու մէջ փարայ կը
ընէ : Գոնէ՛ Սապահ գիւլը և Կէճէ՛
գիւլը հոս չեն որ . կ'որոշեմ Բարիկի

մէջ Սապահկիւ կ'ուզէ Զանգակեան
նոր կուսակցութիւն մը հիմնել :

Թրամուէյի ընկերութիւնը Շիրվի-
թաթաւլայի գիծին շինութեան ձեռ-
նարկեր է եղեր . Թրամուէյի ընկե-
րութիւնը ինչպիսիք աս ալ քիթն ու
բերանը կը պարծնէ միւսներուն պէս :

Կը լսենք թէ՛ քանքարաւոր բը-
ժիշկ տօքթ . Մ. Եուսուճեան ձեռ-
նարկած է 25,000 ոսկի դրամադրով
խնայողական Պանքա մը հիմնել :
Այս նպատակաւ սկսած է աչքը իս-
ծած դրամատէրներու իր առողջա-
պահական չըջարկականներով դի-
մուկներ ընել՝ դրամադրուի ձեռք
բերելու համար : Դրամ տուողին
Աստուած խելք տայ, և բժիշկին ալ
չատ քաշել չիտայ :

Հինդուան դահլիճը տապալեցաւ :
Վարդ էր և վարդի մը չափ միայն
ապրեցաւ՝ առտու մը :

Արեւեան-Արմէնեան խումբը այս
իրիկուն՝ Օթէլլո : Զը գացողը կամ
խելք չունի, կամ փարայ :

Բերայի Երիտասարդաց Միութեան
անդամները ամենքն ալ մաքուր
երիտասարդներ են եղեր : Պատճառ :
Որովհետեւ առջի օր ամէնքն ալ
բաղնիք գացեր են : Ահա՛ թէ ինչպէս
մեր մէջ պատուաւոր և մաքուր երի-
տասարդներ կը բազմանան :

Բիզանդիոնի մէջ մարդուկ մը,
որ բարեկամն է եղեր Բէչեան էֆ.ի
և սակայն մեր բարեկամը չէ, կը հարցնէ
թէ՛ արդեօք Հայ մամուլը մարդաս-
պաններու թեր կ'ելլէ : Նախ Պ. բա-
րեկամ երբէք չենք ներեր քեզի որ
այդ մասին կասկած մը իսկ ունենաս
Հայ թերթերուն մասին և յետոյ քեզի
ինչ . արդեօք Վահրիճ վրդ.ի մտե-
րիմն ես . ամէն պարագայի մէջ
թերթերը իրենց ընկելքը դիտեն Պ.
բարեկամ, դուն ըու գործիդ նայէ
և եթէ գործ չունիս գնա կամուրջին
գլուխը կայնէ և անցող դարցողները
համրէ : Ապահովարար մեծ յանցանք
մը գործած ենք, որ Աստուած մեր
մէջ հետզհետէ կը բազմացնէ պօշ
լաֆճիները եւ պօշ մարդերը :

Դահլիճին պահած լուսթիւնը կը
վրդովէ եղեր Երեսփոխանները :

Ինչու կը վրդովիք սիրելի բա-
րեկամներս . ըլլալիքը այդ էր արդէն :
Բեամիլ փաշայի դահլիճին բնարանն
է . «լուսթիւնը ոսկի է» : Կերեւի որ
Բեամիլ փաշայի դահլիճը ոսկին շատ
կը սիրէ :

Պետրոս Հաւաճեանի լեզուն բաց-
ուեցաւ վերջապէս և ասոր համար
նախընթաց օրուէն է ի վեր հատիկ կը
բաժնուի Բերայի մէջ : Նոր լեզու ել-
լող պէպէ՛քներուն ալ ատանկ կ'ըլլայ :
Անցեալ օր նոյն երեսփոխանը իր
ձեռքը, Բերայի մայթին վրայ, քլու-
պին առջեւ, վայրկեան մը օգին մէջ
մնաց՝ երբ մէկուն կը կարկառէր .
յայտնի չեղաւ թէ՛ դէմինը չը տե-
սաւ, թէ՛ կարեւորութիւն չտուաւ :

Բերայի Թաղ . Խորհրդարանին
մէջ Բաքմաճեան մը կար որ լրտե-
սական ամբաստանութեամբ հեռա-
ցուցուեցաւ այդ տեղէն Պ. Պ. Հըն-
չակեաններու կողմէ : Այժմ յիշեալը
նորէն պաշտօնի անցեր է և հետե-
ւաբար ճամբու դրուեր է ընտանի-
քի աէր և խել մը ծախքերով Բերա
փոխադրուած կարող, պարկեշտ երի-
տասարդը : Արդ նախկինը եթէ լրտես
էր և հանեցին ինչո՞ւ առին դարձեալ .
եթէ լրտես չէր ինչո՞ւ հանեցին : Կ'ե-
րեւի շատ մեծ շահ մը ունէր Թաղ .
Խորհրդարանին մէջ պաշտօնավարե-
լու որ յիշեալ Բաքմաճեանը Հնչակ-
եաններու տուաւ... Բանի մը օրէն
կարգ մը գիմակներ վար պիտի առ-
նենք :

Սա մեր վարժուհիները...
Հաւատացէ՛ք սոսկալի բաներ են .

բնականաբար բացառութիւնները
միշտ յարգելի և համբուրելի են :
Այդ վարժուհիներէն մէկը Ահմիթ մը,
որ Հիւանդանոցի որբանոցին մէջ կը
գտնուի, կ'երեւի փոխանակ իր գոր-
ծին ետեւէն ըլլալու աս ու ան խըծ-
բծելու կ'ելլէ : Այդ վարժուհին՝ Հայ-
կանոյ Յարութիւնեան, աւելի ա-
ղէկ կ'ընէ որ ասկէ վերջ իր դասե-
րովը զբաղի և չզբաղեցնէ Օր . Ի-
տարէճեանը, իր պարագա և անոտի
խօսքերով : Այս առթիւ խղճի պարտք
կը զգամ յայտարարելու թէ Պ. Խա-
չիկ Իտարէճեանի մասին մեր գրածը
մեկնողները չարամիտներ ու խճճող-
ներ են : Հո՛ս էք Օր . Յարութիւն-
եան :

Տիմէթօգայէն մի ոմն Տիգրան
Մանուկեան՝ որ կ'երեւի նշանաւոր
հոսնոս մըն է «Խաթաբալա» կը
կարդայ եղեր առանց հասկնալու և
մեղմէ «Խաթաբալա»ի բանալին ու-
ղեր է : Յայտնի չէ թէ Տօքթ. Պօ-
ղոսեան յաճախորդի մը պէտք ունի՞
Հիւանդանոցի իր յարկաբաժնին հա-
մար :

Երեսփոխանները Խորհրդարանին
մէջ ի՞նչ կ'ընեն :

— Պօշ շափեր կ'ընեն :
Անցեալ օր մեծ խնդիր է եղեր
թէ ի՞նչ ձեւակերպութիւններով պիտի
երթան Սուլթանին՝ Պայրամը շնոր-
հաւորելու :

— Մենք պէտք է առաջ անց-
նինք, ըսեր է մէկը :

— Զէ, մե՛նք պէտք է անցնինք :
Ու այսպէս երկար բարակ վիճա-
բաներ են :

Յետոյ խնդիր է եղեր թէ չափե-
ք ո՞վ պիտի երթան Սուլթանին թէ
ըտէնկօթով կամ սթանպուլինով :

Եւ մենք կը կարծենք որ անոնք
ներսը երկրին շահերով կը զբաղին :
Անոնք իրենց քուսպեքովը կը
զբաղին կոր Խորհրդարանին մէջ :

Սա մեր քաղաք . Ժողովին կարգ-
մը աչք բաց անդամներուն ի՞նչ կ'ը-
սէք : Մամուլի այս ազատ օրերուն
իրենց ո՞ր իրաւունքովը գործառնու-
թիւններու մասին ընդարձակ տեղեւ-

կութիւններ չեն ի տար : Աղգէն և
մամուլէն բարձր են իրենք : Կ'ու-
ղեն որ ըսենք թէ՛ միայն փալանը
փոխուեցաւ... : Ալ իրենց ֆեֆին
համաձայն գործ չկայ . այս պէտք է
գիտնան :

Թ Ա Տ Ր Ո Ն

Բըթի-Շանի թատրոնը յառաջի-
կայ երեքշաբթի գիշեր ժամը 4ին
պիտի տրուի մի մեծ

MELI-MÉLO ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԹԱՏԵՐԱԿԱՆ
ԵՐԱԺՇԱԿԱՆ ՑԱՅՏԱԳԻՐ
- 1.— Ծավուց Սուլթան Սէլիմի ճառը .—
Յայիգ պէյի կողմէ :
 - 2.— Նէսրէճ, ողբերգ 2 տեսիլ :
 - 3.— Խորոսիկ, Արշակ Պէնլեանի և Օր. Բօ-
ղալիի կողմէ :
 - 4.— Օր. Վ. Քը Կերիմի, իր բերթոնարէն
մէջ :
 - 5.— Մահապարսի մը ճառապանքը .—
Մենախօսութիւն Յ. Էքսէրճի պէյի կողմէ :
 - 6.— Կիւլ Նիհալ, Գ. վարագոյր :
 - 7.— Ինչպէս եղաւ, Գ. վարագոյր :
 - 8.— Էփէնիմ որսի կ'երթայ, Բ. վարագոյր :
 - 9.— Փորոսիկ մը, հայերէն լեզուով կատա-
կախոյ՝ Տիգրիս Բնարի և Ե. Թօլայեանի
կողմէ :
Դաշնակ՝ Յարութիւն Սինանեանի կողմէ :
Ծովային զինուորական մեծ ֆանֆառը պիտի
մասնակցի Տոմարները հիմակուէն կը ծախ-
ուին Կալուօսի խմբագրատունը :

Թերթերը հերքած էին . ուղածնուն
չափ կրնան հերքել . Զօհրապի դէմ
սպառնալիք եղած է : Իրականութեւ-
նը ա՛ս է : Այո՛ տխուր է . բայց ի-
րականութիւնը միշտ իրականութիւն
է, ինչպէս որ ներկայ Թուրքիան
հին Թուրքիան է :

Դահլիճը նորէն կ'երեւայ եղեր .
արդէն Թուրքիոյ մէջ կանոնաւոր
բան չի շինուիր որ, եթէ մարդու
պէս քանիս ընէին ասկէ առաջ
Դահլիճը ո՛չ կ'երեւար և ոչ ալ կ'ըլ-
նար : Լուր կայ որ Դահլիճին քովն
ի վեր պատ մը պիտի շինուի որ-
պէս զի ալ չերեւայ :

Անսալտօ գործարանը Դարաքէօ-
յի կամուրջին նորոգութեան ձեռ-
նարկեր է կողեր... : Այս լուրը
հաստատուած օրը Պոլսոյ Բերդերէն՝
Իբրեւ աղգ . մեծ տօն 101 Թնդանօթ
պիտի արձակուի եղեր :

Օսմ. կառավարութիւնը 4 միլիոն
ոսկի տուգանք կը պահանջէ Աւըս-
տրիայէն : Խեղճ Թուրքիա Աստուած
անոր հոգի մը տուած է և չի կրնար ետ
առնել, դո՛ւն փարա՞ պիտի առնես :

**ՊԱՐԵՑԷՔ
ԿԱՎՈՇՎԱԼՍԸ
ԳՐ. ԹՕԼԱՅԵԱՆԻ
ԳԻՐ 5 ՂՐՈՇ**

ՎԱՂԸ “ԿԱՎՈՇՎ”

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ՍԱԳԱՅԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Բ. ԹԱԳԱՆԻՆ



MAYER-ՄԱԵՐ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ



ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ՀԱՆՈՒՄԻՆԻ ՊՈԼԻՍ

ԿՆՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ Կատարելապես չկարող է առանց զոյնի մաքրության և բոլոր այն տիպիկների որոնք հոգը ունին այս թանկագին ձիւղերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն գործածութիւնը այն ածանցակն արտադրութիւններուն ոչ ընդհանրապէս ոչ ընդհանրապէս ծախու կը հանուին Գործածութիւններուն նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներքին կ'ընէ այդքան ածանցակն զանոնք: Այս պատճառաւ նուազ ստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օգին մէջ կ'ընդունան, և միւս տեսակները, տակի վտանգաւոր մարմին համար, կ'պարունակեն այն տեսակ ճարպեր որոնք կ'ծծին և քիչ ատենէն առակ բերեն անգարմանը կարմրութիւններ և խորշոններ:

Միայն ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի կլիւստրոյի բաղադրուած՝ առանց ո՛ր և է նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է. բովանդակ աշխարհի մէջ բոլոր վայելչաւէր կիներէն ընդունուած է և նոյն իսկ իր անհուն յաջողութեան պատճառաւ է որ բազմաթիւ կեղծ նմանութիւններ երևուան կ'ըլլեն ամէն օր: 1900ի տիպիկական Արտադրութեան մէջ արմանացած է Ռակի Միտալի:

Ի հարկէ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԻ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն և ասոր պատճառը իսկապէս իր նախնական նիւթերուն աղնի տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծախողները կ'ընտրուին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր գնովն նուազ կը շահին նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ:

Բնաւ իր վարանքը ուրեմն պահանջել ճշմարիտ ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ, միշտ լաւ ուշադրութիւն ընելով վերի վաճառանիշին և յաւատարմութեան պիտի մնաք, մինչդեռ ձեր գործունէները պիտի պառաւանսն՝ ցաւելով իրենց սխալ խնայասիրութեան վրայ:

ՄՈՒԷՔՍ, ՕՇԱՐԱԿԸ



Ապիսի օշարակը լաւագոյն ու առաջնակայ գործըն ու դարմանն է հազի դէմ, ընդունուած և հաստատուած Եւրոպայի բոլոր մեծամեծ բժշկներուն կողմէ և կը գործածուի բոլոր հիւանդանոցներուն մէջ: Գործադրութեան եղանակը կը զորկուի դեղին հետ միասին:

Չորս հազարէ աւելի բժշկներ հաստատած են այս օշարակը՝ իր հազի միակ ու լաւագոյն դարման:

Կը ծախուի Բերա, Պօն Մարչէ, Գօթերա, Թիւրի Բերայի, Ղալաթիոյ, Պոլսոյ ու Գաթաի գիւմաստրիկներուն մէջ, ինչպէս նաեւ բոլոր կարեւոր դեղաւաճառներուն քով:

Ամբողջ Թուրքիոյ համար միակ կեղծութեան գիւղործակալութիւն՝ Ղալաթիա, Մեծ Միլլիթի խանութիւն 37:

Գին.՝ Պոլսոյ համար մեծ շիշը՝ 24, պղպեղի շիշը՝ 13, դաւառներու համար մեծը՝ 30, պղպեղի շիշը՝ 17 զրուշ: Թղթաբաշի՝ ծախքը սեր վրայ:

Դաւառական յանձնարարութիւններու համար պէտք է դիմել ուղղակի Ղալաթիա, մեծ Միլլիթի խանութիւն 37:

ԲԱՍՆԱԳԷՏ ԱՏԱՄԵՆԱԲՈՅԺ

ՏՈՒԹՈՒ Մ. ԱՅԱՆԵԱՆ

Վկայեալ Բարիկի համալսարանէն, և անձնական ատամնաբոյժ երջանկայիշատակ Մուղաֆէրէտիոն Շահին:

Բերա Մեծ Փողոց, ռուսական դեղագործարանի դիմաց Սիթէ տը Սիթէ, ուր կը դարմանէ ամէն տեսակ ակոյի, լինալի և բերնի հիւանդութիւններ վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ակոյներ սան քրօշէ և անբար օտար տարի ապահովութեամբ:

Այս դարմանները կը կատարուին Գաղղիական և Ամերիկեան ամենապիտան հնարուած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործողութիւնները, պիտի ընդունի, առանց ցաւի և առանց քնացուելու: Իսկ մասնատու Բարիկեան մասնագիտական վերջին սխալէմով, իր տեսակին մէջ եղածն է: Այսպէսէ՛ք և դատեցէ՛ք:

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ

ՇԻՇԵՐ

(Verres pharmaceutique)

Դեղարաններու և դեղորէնի վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչև հիմա Հրեայ վաճառական մը անձօրոյ ըրած էր: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիրա Սիլվիոյ Պօլսոն (Աշքը Էֆէնտի խան, թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին և ունի ճոխ ու աշխատեցող միջոցներ մը այդ կարգի ամէն կերպ շիշերու և կարող է մրցիլ ամէն կերպով: Վստահ և ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ և թէ՛ Գաթաի մեր բոլոր Հայ դեղագործները և ճոկիւսները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ և այս ճիւղին մէջ մէկ հատիկ առևտրական տունէն, քաջալերելու համար Հայ ձեռնարկուն որ միւրեւոյն ատեն ամենալաւ կ'ընտրան ընտրած է իրեն:

Անպարկելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց հազար կ'ընէ և լաւ մեքենայ մը ունենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անխիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցաւ: Եւ մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զգոցնութեանց և անպարկելի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

Հայաստանի ԿԱՅՄ. ՊԱՆԱՏԱՆ. The Singer Manufacturing Co
մեքենան լաւագոյն է. առջին մեքենան ամէնէն աւելի կատարելաւ, յարմար, հաստատուն և գիւրադորածէին ըլլալուն՝ բոլոր վայելչաւէր աշխարհի մէջ ամէն օր Սինկերի մեքենաները կը գնէ:

Զեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկերի մեքենաները կը ծախուին մը միայն Սինկերի ճեղքաւորեալ վաճառատանց մէջ:

1. Մեծ փողոց, Պօն Մարչէի գէմ, թ. 343 և 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթիա Սէրայի խանէն գէմ.
1. Սինկերի խան, Թիւրքիոյ Կաթաի
2. Գաթաի, Թիւրքիոյ Կաթաիի կայարանին գէմ.
1. Սինկերի Համալ, թ. 2
2. Սինկերի Կաթաի, Թիւրքիոյ Կաթաիի կայարանին գէմ, թ. 2

ՀԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԱՐԵՒՈՐՆԵՐ

Դասերը եւ նորոգութիւնք ձեր.

Կատարելաւ երախաւորութիւն:

Կատարելաւ գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ: Սինկերի Ընկերութեան կեղծ վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Միլլիթի թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղազի տունը: